

## ՆԱՂԻԱՔԱՎ ՅՈՏԱՐԱՋԴԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ՆԿԱՐԱԴԻԲ 02 ի

Օձն ինքնին, բրնակ մայրեաց, դոշտավոյրաց և լերանց,  
կարէ իրաւամիք հանդիսանալ յիմ տաղս երգոց.  
Զոր շարժմունք իւր գեղեցիկը և պըճնութիւն ճոխապաճոյն  
Սիրելի քերթողաց և նըկարչաց կացուցանեն,  
Են նորա սովորոցիք իւր և կըռիւք և տարփք սիրոց,  
Գընացք յոխորտապանծ, ճարտար շըրջանք մանուածապատք.  
Այլ խուսափէ նա յաշաց, և մացառաց ուրեք 'ի խորչ,  
կամ 'ի ծերպըս ժայոից կամ 'ի խոռոշըս պարըսպաց,  
Գողցես հարեալ 'ի թախիծ ընդ իւրն համբաւ չարաշըւէք,  
Ըզնըզին թաքուցանէ խայթս և զամօթ իւր և ըզթոյն:  
Ես ոչ նըկարեցից բանիւ զբազում ազգըս նորին՝  
Զարմազանըս տեսութեամբ, ճարտարութեամբ և միտութեամբ.  
Դիւրագոյն իցէ ինձ զանապատաց թըւել զաւազ,  
Ըզտերևս անտառաց և զլիոհակս ալեաց ծովուց,  
Քան զահագին ազգ ատոհմի նորուն ըզցեղուն բազմազանս:  
Վարդի նա, լիւլայ, խայտայ, մագլէ, թըռչի և կամ սողի.  
Մերթ 'ի ձայն հեռաստանեայ շինականացըն սըրընգաց  
Ի հունձսըն դարանեալ՝ խաշանցն հօտի սպասեալ մընայ.  
Եւ անդէն ըզգաստուածսըն թեխամուրթս ուժգին պարզեալ,  
Ըմբռանէ զորսն և պընդեալ և հեղձուցեալ՝ ուտէ անյագ:  
Ամիկն և ոչխար և է յաճախ զի եզն ողջոյն.  
Ետ ընդ ետ ընկլուզեաք 'ի լայնալիիր որկոր նորին,  
Ի մեծաբաց բերանոյն ընդ վայր ճըգնին թափել զինքեանս:  
Այլ խսկոյն հատուցեալ վրէժս ըզպ ոտառող գազանութեանն,  
Ընդ բեռամբ ահագին խրախնճանութեանն 'ի քուն լինի.  
Եւ հեշտեաւ յորսողին մատնեալ 'ի ձեռս յառ և ապուռ,  
Ընդ ծանու մահակաւ կամ երկաթով վայրենոյ առն՝  
Անկանի շուայտեալ արեամբ և յօրացեալ կոտորածիւ,  
Մերթ 'ի խորս անդ մայրեաց ըզհինաւուրց ծառոյն բընով՝  
Ըզտրտուն իւր պատատէ և ուղղաբերձ կանգնէ զճակատ.  
Այլ ուրեք 'ի կատար ծառոյն՝ ուր ազգ նորա զեռայ,  
Սիդապանծ նազանօք խըմբէ զսերունդ իւր քապնելի:  
Դիահն աչք զարհուրագին ըզբիւր գազանսըն զայնոսիկ,  
Փարետլս ըզբընովն և շուրջ գոստավքըն բոլորեալ.  
Թը-ի որ ըզսոսկալոյն Մ'եքերեայ գվարաւըն տեսանել,  
կամ ըզհերսըն գիսախուիւս կերբերոսին զողունջողի,  
Որ ցանդ ըզտիւ և ըզգիշեր պահպանէ զդահ Սանդարպետին.  
Եւ կամ ըզգէսս օձախուիւս ըզգագաթամբ Այժկատովնի:

Մի արասոյեն ինձ երկինք դընտալ ընդ թու փս անտառակին՝  
Ծըծել ըզմիւք զովարար և կամ նընջել ընդ հովանեաւ,  
Մինչ նա յաւուր ամարայնոյ՝ ՚ի խաւարչուտ ծակուց իւրոց  
Ելանէ տապեալ պապովվ, սըրտմըտութեամբ և տրոփանօք:  
Ի գագաթունը ծառոց, ՚ի գաշտավյայրս և ՚ի լերինս,  
Անասունքն ՚ի գող հարեալք՝ հազիւ խուսեն առ ՚ի նմանէ,  
Ում ՚ի մաս այնոցիկ տըւան յերկնուստ աչք բոցափայլք,  
Հեղձուցիչ շունչ բերանոյ և ատամունք զարհուրելիք:  
Այնչափ յոյժ անհընարին է սաստկութիւն թունյ նորին,  
Զի յաճախ խայթուածովն ինքըն լինի սաստակամահ.  
Թոյն նորին այն ինչ հազիւ ՚ի ներքս ՚ի վէրս անդ ընդմըտեալ,  
Անկանի մարմինն յօշ յօշ, և մածանի արիւնն ՚ի պաղ:  
Զիք վայր հեռասահման հանդէպ վազիցն երագութեան.  
Ընթանայ իրբե զիայլակն, և իրբ ըզտէգ մի ժամանէ:  
Գանին մեզ ածէ ՚ի տեսներհակ պատկերը զարմանաց.  
Զեռուն ՚ի յերկրի, ասաղ ՚ի խորանն երկնակամար.  
Աստ ծածկէ յաշաց մերոց ըզմերծենալ իւր մահաղործ,  
Լըսիլի առնէ այլուր ըզառաչողն իւր ըզկանչիւն.  
Կայ զօղեալ ՚ի խեփորին և կամ ըզնոր ըզգենու կերպ.  
Մոլեգին ՚ի յարձակմնն և հանճարեղ ուազմայարդար,  
Սինոն նենգածոս, կամ գիշախասնձ Պոլիփեմէս,  
Զոհ երբեմն և ճարակ և գահին լեալ իւրոյ ազգին.  
Ահարկու հաւուց թըռչնոց, անտառախիտ մայրեացն հիւրոց,  
Եւ սողնոց ճըռղաց ՚ի ճախճախուտը բնակելոց,  
Ահագին վագերն անգամ դիմագրաւեալ սըրտմըտութեան.  
Թոյն սարսափելի, կենդանարար զեղ գարմանոյ,  
Զուլացիալ ՚ի ճըմերան, վառեալ յեռանդըն գարնանի.  
Սիերելի Ասկլեպիոս, ժամուց պատկեր խորհըրդաւոր.  
Հինաւուրց իշխեցող ամերիկեան ծառոց մայրեաց,  
Անարգեալ յեւրոպէ, Ափրիկեցւոցըն պաշտելի.  
Խոկ Հընդգին, որ յամենայն ժամ զոյ նըմին ասպինչական,  
Քըծնող բարձակից և ընդասուն մտերիմ ոդի.  
Խոհական և սըրտեայ, քաջակորով և զիւրագուն,  
Յառասպելս Հըռչակեալ, յաստուածեղէն գիրս անիծեալ,  
Ի տաղսըն Միլտոնի եղեալ գործի Սագայելի,  
Էզկընովն Ազամայ զանմեղութիւնն ՚ի բաց կապաեաց,  
Եւ ընդ նըմին ըզկարի յողգողին, աւաղ, կորոյս ըզմարդ.  
Նովաւ պատմի Լայոկովն ՚ի տաղս երգոցըն վիրգիւեայ,  
Եւ տանջանք պատուհասին ըզմեզ ՚ի ցաւս համակելով  
Տան հեղուլ տակաւին արտօսը ՚ի կուճըն վըշտահար: